



«Ճանաչել Կիմաստություն և Կիրատ, իմանալ Կրանս հանձարոյ»

Սովորե՛ք Հայերեն
Учите армянский!

Խոսե՛ք Հայերեն
Говорите по-армянски!

Խորի՛ք Հայերեն
Думайте по-армянски!

Ապրե՛ք Հայերեն
Живите по-армянски!

Կարդա՛ք Հայերեն
Читайте по-армянски!

УРОК 9

ԴԱՍ 9

ЗВУК	БУКВА
[x']	Ղ,ղ
[x]	խ,խ


Согласные [x'], [x] Правписание ղ-խ

Согласные [x'] и [x] – заднеязычные щелевые звуки. Они обозначаются буквами ղ, խ. Звук [x'] является звонким, а [x] – глухим. խ [x] по произношению приблизительно соответствует русскому [x] (армянский խ более заднеязычный звук, чем русский, и поэтому произносится тверже русского х). Его усвоение не представит для вас трудности. Звук [x'] – звонкий вариант глухого звука [x], в русском языке его нет. Звук [x'] по произношению приближается, с одной стороны, к звуку [x] (звонкий вариант глухого [x]), с другой – к звуку [r] (щелевой вариант звука [r]). При произношении [x'] задняя часть языка поднимается к мягкому нёбу, как и при произнесении звука г, но не касается его.

В русском языке подобный звук можно услышать в словах господи – [x]осподи, бог – бо[x'], в которых г иногда произносится [x'], а также в междометии агу [ax'y]. Чтобы привыкнуть к произнесению звука [x'], несколько раз произнесите слова: 1) [x]осподи, а затем следующие сочетания звуков: ղղ [x'o], ղղո [x'y], ղա [x'a], ղի [x'i], ղը [x'yi], աղո [ax'y]; 2) бог (бо[x']) и сочетания : օղ [ox'], ուղ [yx'], աղ [ax'], իղ [ix']. **А сейчас постарайтесь произнести и заучить следующие слова:** աղ [ax'] соль աղմուկ [ax'muk] шум աղաղակ [ax'ax'ak] крик, шум վախ [vax] рано վաղը [vax'y] завтра օղ [ox'] серьга լող [lox'] плавание ուղիղ [ux'ix'] прямой; прямо ուղեղ [ux'ex'] мозг վազող [vazox'] бегающий խոսող [xosox'] говорящий սեղան [sax'an] стол

Обратите внимание на слова վազող, խոսող. Эти слова – причастия, показателем которых является суффикс. В армянском языке слова с суффиксом – ող могут быть как действительными причастиями настоящего времени, так и существительными со значением деятеля, например:

գրող [gyrox'] пишущий; писатель խաղացող [xaxaxox] игрок ուսանող [usanox'] студент **Постарайтесь произнести также следующие слова, в которых есть [x'] и [x]:** խաղ [xax'] игра խաղալ [xax'al] играть խաղող [xax'ox'] виноград խաղաղ [xax'ax'] тихий, спокойный, мирный Если вы затрудняетесь произнести эти слова, произнесите их несколько раз по слогам: խաղալ, խաղող, խաղաղ, խաղացող, աշխատող. Вы уже знаете, что звук [x'] обозначается буквой ղ, а [x] – буквой խ. Но часто в позиции перед согласными звук [x'] оглушается, и буква Х произносится [x], т. е. пишется, но произносится [x], например: աղբ [axp] сор, мусор ուղտ [uxt] верблюд եղբայր [expayr] брат բողկ [boxk] редька, редиска **Напишите прописные и строчные буквы Ղ, ղ, խ, խ.**



ЗВУК	БУКВА
[h]	Հ,հ

[h] – придыхательный гортанный глухой звук. Он обозначается буквой հ. Как уже было сказано, звук [h] произносится как г в русских междометиях: ага [aha], ого [oho], эгэ [эхэ]. **Произнесите несколько раз следующие звукосочетания:** hw, [ha], hn [hy], hn [ho], hh [hi], wh [ah], nh [yh], oh [oh], hh [ih], th [эх] **Запомните, что:** 1) hw – разговорный вариант утвердительного ответного слова այո [ayo] да 2) Звукосочетания: h~h фи!, t~h эх!, w~h ой! ой!, o~h ой! являются междометиями 3) wh является также существительным и означает страх (синоним слова վախ). **Заучите эти слова:** Звук [h] на письме обозначается буквой հ, но в словах в позиции после ղ буква հ пишется, но не произносится: աշխարհ [ашхар] мир, земной шар արհամարհել [архамарэл] пренебрегать, пренебречь շնորհել [шнорэл] присуждать, присудить, удостоить խորհուրդ [хорурд] совет

Напишите прописную и строчную букву Հ, հ



Словарный запас

բախտ [бахт] судьба խիզախ [хизах] храбрый ժխտել [жыхтэл] отрицать; опровергать խախտել [хяхтэл] нарушать, нарушить լուրջունը խախտել [лыруйтуны хяхтэл] нарушать тишину գաղտնի [гахтни] тайный աշխատել [ашхатэл] работать; зарабатывать ես աշխատում եմ: [Ес ашхатум эм] Я работаю խաղաղ երեկո [xax'ax ereko] тихий вечер խաղալ [xax'al] играть ուրախ [урах] веселый ուրախ տղաներ [урах тых'анэр] веселые ребята ես շատ ուրախ եմ: [ес шат урах эм] Я очень рад տխուր [тыхур] грустный ես այսօր տխուր եմ: [На айсор тыхур э] Он сегодня грустный. կախել [кахэл] вешать, повесить, подвешивать ես խաղում եմ: [на хах'ум э] он играет

Курс ведет Армине ОВСЕПЯН



ԱՆՄՈՒՅ ՅԱՆԴԻՊՈՒՄ ԱՄԵՆԱՅՆ ՅԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ՅԵՏ

Գևորգյան ճեմարանը, որի հետևանքով Սփյուռքից և Հայաստանից հարյուրավոր երիտասարդներ ձեռնամուխ եղան ուսումնառության: Նա մեծ օգնություն գործադրեց միավորելու Կիլիկիո Սեծն Տան կաթողիկոսությունը, համոզեց, որ Ս. Էջմիածինն առաջինն է ընդունել քրիստոնեությունը: Ինչպես կարելի է, որ Հայաստան երկիր լինի, էջմիածին ունենա, իսկ պաշտամունքի կենտրոնը գտնվի արտասահմանում: Բայց 30 տարի անդրդվելի մնացին Կիլիկիո Տան Միաբանության այրերը, մինչև 1988 թվականի վերջից երկրաշարժը, երբ Վազգեն Առաջինն, աղետից տկարացած և հուսալքված, երկիր այցելած պառակտողներին ներեց, որոնք զղջացին և ընդունեցին Միաբանությունը: Նա հասկացնել տվեց պետական այրերին, որ կրոնը, աստվածապաշտությունը ազգանվիրության և հայրենասիրության ուսմունքի դարբնոց են, այնպես որ, պետությունն ու կրոնը միասնական պիտի լինեն: Իր մոտ հաճախող հայ հարուստների միջոցներով նա կառուցեց և վերականգնեց շատ եկեղեցիներ, որոնք անցան պետական հսկողության տակ: Նա մտահոգացավ Երևանում Մայր տաճարի կառուցումը, իսկ էջմիածնում «Ալեք և Մարի Մանուկյաններ» հիմնադրամի հաշվին Սուրբ Էջմիածնի հուշարձանը և գանձատունը: Հրաշք գանձատան բացումից երեք ամիս անց, բախտ ունեցա այցելելու և գրուցելու կաթողիկոսի հետ: Ես կազմել էի «Ասք հայոց ազգի» պատմագրական ստեղծագործությունը և որոշել նրան ցույց տալ: Մինչ էջմիածին գնալը՝ գործս ներկայացրի Շիրակի թեմի առաջնորդ Նարեկ Շաքարյանին: Նա հիացավ և խոստացավ ինձ օգնել: Նամակ գրեց Վեհափառին և ինչ-որ գծեր արեց թղթ վրա և գրեց «Նուպար»: Հասկանալի էր, որ ես պիտի հանդիպեի Նուպարի հետ: Որոշեցի ձեռնունայն չգնալ, երկու օրվա ընթացքում գրչածայրով նկարեցի

Վեհափառի երիտասարդ ժամանակվա դիմանկարը և վստահորեն ճանապարհ ընկա: Գանձատունը նոր էր բացվել և լիքն էր արտասահմանցիներով: Վեհափառը խիստ զբաղված էր: Նամակը պիտի ցույց տայի պահակին, որ ինձ ներս բողներ: Նուպարը գրությունը վերցրեց, հրավիրեց նստելու և ասաց. - Նարեկն ինձ գանգ է տվել, բայց Վեհափառը հիմա Երևանում է, սպասենք մինչև գա: Ես նրան ցույց տվեցի Վազգեն Առաջինի դիմանկարը, շատ հավանեց, իսկ երբ ծանոթացավ «Ասք»-ի հետ, հիացավ: Քիչ անց պարզ դարձավ, որ Վեհափառը եկել է: Իրարանցում սկսվեց, ես մտածեցի, որ այսօր ինձ չի ընդունի, արտասահմանցիները շատ են: Նուպարը գնաց և ուշացավ, հետո եկավ ժպտալով. - Գնա՛նք, Վեհափառը քեզ արտահերթ է ընդունում: Միտոս թպրտաց: Ներս մտանք, լույսը միայն գահակալին ու սեղանին էր ընկած: Մոլորվեցի, Նուպարն ինձ առաջ մղեց, մոտեցա համբուրեցի նրա առաջ պարզած աջը: - Բարի տեսություն, տիար Սարգսյան, շնորհակալություն պատկերիս համար, քուկին ձեռքի գո՞րծն է: - Այո՛, - ասացի ես: Նա ժպտաց, զգացի, որ դեմքը դալուկ է: Երկար զբաղեցնել չի կարելի, մտածեցի և արագ ներկայացրի «Ասք»-ս: Յուրաքանչյուր թերթ դիտելիս նա հրճվում էր, գովեստի խոսքեր ասում: - Նուպար, տիար վարպետին հետ կապը մշտական ըրե: «Ասքը» վերջացնելն ես կուղարկեմք Ալեք Մանուկյանին, ասիկա Ստոկհոլմի տպագրության արժանի է, - հետո դարձավ ինձ, - հիմա ըստ ընտանիքը, երեխեքը ինչպես են, քանի՞ են... - Մշեցի եմ, հինգ երեխա ունեմ, ապրում եմ իմ ձեռքով շինած տանը: - Ապրես տիար Սարգսյան, դուրս իսկական հայ ես, թող Աստված պահե ընտանիքը ու զավակները: - Նուպար, գանձատունն հատըմ բեր,-

ասաց նա: Նուպարը պատկառանքով բերեց մի շքեղ ալբոմ: Վեհափառը դրեց դիմացը և մակագրեց՝ «Հարգարժան տիար Հրանտ Սարգսյանին՝ գնահատանքով և օրհնությամբ: Վազգեն Առաջին, կաթողիկոս Ամենայն Հայոց, 1988 թիվ»: - Դուրս քոթեքի գործ սկսած ես, աճապարե, որ ժողովրդին հանձնես ան... Ես համբուրեցի նրա աջը և հրաժեշտ տվեցի: - Հազվադեպ ընձ է քեզ տված, - դրսում ասաց Նուպարը,- աճապարի պատգամը կատարել... Ես թևավորված և լուսավորված տուն եկա, բայց վա՛ղ, օրեր անց տեղի ունեցավ աներևակայելի: Դեկտեմբերի 7-ին քաղաքն ամբողջովին կործանվեց, ուրախ ու ծաղկող քաղաքից մնացին լոկ փլատակներ ու դիակներ: Երկրաշարժի երկրորդ օրը Վեհափառն եկավ Լենինական, նա քայլում էր ողբացող փողոցներով, ձեռքերը վեր պարզած աղոթում էր Աստծուն և բոլորին ասում՝ դիմացե՛ք, մաքառե՛ք, համբերե՛ք... Ժողովուրդը հետևում էր նրան, մեկն աջն էր համբուրում, մյուսը՝ փեշը: «Մեր ո՛ր մեղքի համար, Աստված», - կանչում էր նա և լաց լինում, ու շատերն իրենց վիշտը փարատած էին համարում: Հայաստանի շրջափակման տարիներին, երբ հատկապես սուղ դարձավ հացի խնդիրը (այն երկու անգամ թանկացավ) և շատերը մատնվեցին քաղցի, կաթողիկոսն իր բողոքի ձայնը բարձրացրեց իշխանավորների դեմ և երկու տարի իր միջոցներով օգնեց ընչազուրկներին: Իսկ հաջորդ թանկացումներին նա այլևս չկար, ընչազուրկներն սկսեցին լքել վաթառները: Երջանկահիշատակ Վազգեն Առաջինը հայ ժողովրդի համար ոչ միայն հոգևոր առաջնորդ էր, այլև բարերար ու շինարար, պաշտված անձ ու Սուրբ Մարդ, որի ցմանը հազիվ թե երբևիցե կուներանք:

Հրանտ Սարգսյան
ճակարիչ, բանահավաք